«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ՎՊՀ-ի ռեկտոր, բ.գ.դ.

Խաչատրյան Գ.Կ.

"22" դեկտեմբեր 2014թ.

ԿԱՐԳ

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությում ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման

Հաստատված է

ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 10

"18" 12 2014թ.

Վանաձոր

2014

I.Ընդհանուր դրույթներ

1. «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում /այսուհետ ՎՊՀ/ ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման կարգով /այսուհետ Կարգ/ կարգավորվում են ՎՊՀ-ում սովորողների ուսանողական նպաստի (ուսման վճարի լրիվ/անվճար/ ու մասնակի փոխհատուցման /զեղչ/), պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման գործընթացները:
2. Սույն կարգի մշակման իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ ենթակետի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի, 6-րդ հոդվածի 4-րդ կետի,17-րդ հոդվածի 3-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերի, 26-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, ՀՀ կառավարության 27 հուլիսի 2006թ. թիվ 1183 որոշումը, ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 21-03-06/337 (15.06.2006թ.) հրահանգչական նամակը, թիվ 21-03-06/362 (26.06.2006թ.), 21-03-06/513 (12.09.2006թ.), 21-03-06/471 (01.09.2006թ.) գրությունները, ՀՀ արդարադատության նախարարության թիվ Ե 4623 (01.09.2006թ.) գրությունը, ՀՀ կառավարության 2012թ-ի հոկտեմբերի 10-ի թիվ 1323-Ն որոշումը և ՀՀ կրթության և գիտության նախարարի 23.08.2014թ-ի թիվ 815 Ա/Ք հրամանը, ՀՀ կառավարության 16.10.2014թ. թիվ 1126-Ն որոշումը:
3. Սույն Կարգի դրույթները տարածվում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների վրա:
4. Հեռակա ուսուցման համակարգում ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է միայն օրենքով նախատեսված սոցիալական խմբերին:

II.Ուսանողական նպաստների տրամադրում

5. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ՎՊՀ-ի ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

Ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով

6. Պետության կողմից տրամադրված ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսանողական նպաստների քանակն ըստ ՎՊՀ-ի մասնագիտությունների՝ անփոփոխ է և տեղափոխվում է կուրսից կուրս:
7. Ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով, պետության կողմից տրամադրվում է.

   ա)մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով

   բ)օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

- առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.
- 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
- զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց

ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

գ)պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

դ)Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդներից ՀՀ կառավարության կողմից անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողները՝ որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսման ավարտը:

ե) ՀՀ կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին (պետպատվեր) ընդունված ուսանողներին /արտամրցույթային, սփյուռքահայ/:

8. Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:
9. ՎՊՀ-ում առաջին կուրս ընդունված ուսանողների ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության և բուհերում մագիստրատուրայի ընդունելության կանոններով սահմանված կարգերով: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով՝ սույն Կարգի 14-րդ ենթակետում ամրագրված սկզբունքներով:
10. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:
11. ՎՊՀ-ից ազատված, հեռացված և վերականգնված, այլ բուհից կամ ՎՊՀ-ի այլ մասնագիտություններից տեղափոխված ուսանողները պետության կողմից հատկացված ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսանողական նպաստից կարող են օգտվել ՎՊՀ-ում /տվյալ մասնագիտությամբ/ առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:
12. Սույն Կարգի 7-րդ կետի ա) ենթակետում նշված ուսանողների համար ***երկրորդ և բարձր կուրսերում*** մրցույթը դեկանատի կողմից կազմակերպվում է տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատը երկրորդ և բարձր կուրսերի ուսանողների համար կազմակերպում է մրցույթ՝ նախորդ ուսումնական տարվա երկու կիսամյակների քննաշրջաններում սահմանված ժամանակահատվածում հանձնած քննությունների և ստուգարքների գնահատականները: Միջին ցուցանիշը որոշելու համար բոլոր առարկաների հանրագումարային միավորների և համապատասխան կրեդիտների արտադրյալների գումարային արժեքը բաժանվում է բոլոր առարկաների կրեդիտների գումարի վրա /տասնորդականի ճշտությամբ/:
13. Ըստ միջին ցուցանիշի՝ ձևավորվում է տվյալ կուրսի ուսանողների առաջադիմության ցուցակը և անցկացվում է մրցույթ 2 փուլով:
14. Մրցույթի առաջին փուլին մասնակցում են միայն ընթացիկ և ամփոփիչ քննություններից և/կամ ստուգարքներից սահմանված ժամկետում դրական /8 և ավելի/ գնահատական ստացած ուսանողները:
15. Առաջին փուլի արդյունքում թափուր տեղեր լինելու դեպքում կազմակերպվում է երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել նաև ընթացիկ քննությունները դրական չգնահատված, սակայն հանրագումարային քննությունները և ստուգարքները դրական գնահատականով ամփոփած ուսանողները:

16. Հավասար ցուցանիշների դեպքում առավելությունը տրվում է.
ա)երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:
բ)ընթացիկ քննություններից սահմանված ժամկետում հանձնած առավել բարձր միավորներ ունեցող/միավորների միջին արժեքը/ ուսանողներին,
գ)ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ» և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների առարկաներից առավել բարձր միավորներ ունեցող ուսանողներին,
դ)հրատարակված աշխատանքներ, զեկուցումներ, ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցություն ունեցող ուսանողներին,
ե)հասարակական ակտիվություն դրսևորած ուսանողներին:
17. Բոլոր ցուցանիշների հավասարության դեպքում հաշվարկը կատարվում է մինչև հարյուրերորդականի ճշտությամբ:
18. Քննաշրջանին հարգելի պատճառով չմասնակցած (դիմումով՝ բժշկական փաստաթղթով հիմնավորված) և «Բաց դռների օրեր»-ի ընթացքում դրական գնահատական ստացած ուսանողը մասնակցում է մրցույթին:
19. Մրցույթին չեն կարող մասնակցել քննաշրջաններում.
   - «անբավարար», «չստուգված» ստացած ուսանողները,
   - անհարգելի բացակայած ուսանողները:
20. Սույն Կարգի 15-րդ կետում նշված առաջադիմության ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը:
21. Ֆակուլտետի դեկանի կարգադրությամբ ստեղծված ֆակուլտետային մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են դեկանը, փոխդեկանը, ֆակուլտետի արհեստակցական կազմակերպության նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ֆակուլտետի ուս. խորհրդի անդամ ուսանողներ /յուրաքանչյուր մասնագիտությունից մեկ ներկայացուցիչ/:
22. Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է հավակնորդների ցուցակը /հանձնաժողովի անդամների ստորագրությամբ/ և, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, համապատասխան եզրակացությամբ ներկայացնում է ՄՈՒՀ-ի մանդատային հանձնաժողովին:
23. ՎՊՀ-ի մանդատային հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով, որի կազմում ընդգրկվում են պրոռեկտորները, ռեկտորատի խորհրդականները, ուսումնամեթոդական վարչության պետը, դեկանները, արհեստակցական կազմակերպության նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը, ՄՈՒՀ-ի և ֆակուլտետային ուսանողական խորհուրդների նախագահները:
24. Սույն Կարգի 24-րդ կետում նշված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերելիս ՄՈՒՀ-ի մանդատային հանձնաժողովն իրավասու է ցուցակը հետ վերադարձնել տվյալ ֆակուլտետ՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով:
25. Սխալներ և ընթացակարգի խախտումներ թույլ տված անձինք կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության:
26. Մանդատային հանձնաժողովը վերջնական արդյունքները ներկայացնում է ռեկտորին՝ հրամանագրման:
27. Ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսանողական նպաստի տրամադրման գործընթացի արդյունքների վերաբերյալ ուսանողների իրազեկումը կատարվում է դեկանատի կողմից մինչև հաջորդ ուսումնական տարվա սեպտեմբերի 5-ը /ցուցակները փակցվում են ֆակուլտետի ցուցափեղկերին, տեղադրվում կայքում/:

28. Ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսանողական նպաստի տրամադրման գործընթացի վերաբերյալ բողոք-դիմումները ուսանողների կողմից կարող են ներկայացվել հրապարակումից հետո՝ մինչև սեպտեմբերի 10-ը :

Ուսման վճարի մասնակի փոխհատուցում

29. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին:
30. Ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:
31. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը և ՄՈԳ-ի վերաբերյալ տեղեկանքը յուրաքանչյուր տարի ՎՊՀ-ին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:
32. ՎՊՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի վճարովի չափաքանակի շրջանակներում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության հաշվառմամբ՝ մրցութային կարգով, հատկացվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցում (ուսանողական նպաստի կարգով):
33. Ուսանողին ուսման վճարի մասնակի փոխհատուցում կամ ուսանողական նպաստ կարող է տրամադրվել միայն մեկ տարակարգով: Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող ուսանողների համար կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափ նախատեսող կետը:
34. Նպատակային ուսուցմամբ սովորող ուսանողները չեն օգտվում ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից:
35. Առաջին կուրսի, վերականգնվող ուսանողների, այլ բուհերից տեղափոխվող, 2-րդ մասնագիտություն ստացող ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:
36. Ուսանողին ուսման վճարի մասնակի փոխհատուցում (ուսանողական նպաստ) տրամադրվում է առաջադիմության հաշվառմամբ՝ մրցութային կարգով: «Անբավարար», «Չստուգված» գնահատված և քննաշրջանին անհարգելի բացակայած ուսանողների դիմումները չեն քննարկվում:
37. Ուսանողը կարող է կորցնել ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստանալու իրավունքը ՎՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքում:
38. ՎՊՀ իր միջոցների հաշվին, ուսանողական նպաստի ձևով, մասնակի փոխհատուցում է ներքոհիշյալ տարակարգերով ուսանողների ուսման վարձը՝ սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում.
    1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր /30.01-ից/ ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 70%,
    2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ 50%,
    3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միածնող/ ուսանողներին՝ 85%,
    4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50%,
    5) երեք և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 90%,

6) 1 կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող մինչև 23 տարեկան ուսանողներին՝ 90%,

7) մարտական հետթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայության անցած ուսանողներին՝ 30%,

8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 25-30 միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 50%.

9) վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքներին ուսանողներից միայն մեկին՝ 80%:

10) ՀՀ կառավարության կողմից սահմանված հեռավոր լեռնային կամ սահմանամերձ գյուղերի բնակիչ ուսանողներին՝ 20%,

11) Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում 50%-ի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ:

12) Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին.

ա .բակալավրի կրթական ծրագրով սովորող 4 կիսամյակ անընդմեջ գերազանցիկ ուսանող՝ 80%,

բ. մագիստրոսի կրթական ծրագրով սովորող 2 կիսամյակ անընդմեջ գերազանցիկ ուսանող 80%,

13) ակնառու հաջողություն ունեցած ուսանողներ.

ա. մարզական ակնառու հաջողություն ունեցած ուսանող /1 հավաստագիրը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 2 կիսամյակ անընդմեջ/.

- աշխարհի, Եվրոպայի, համաշխարհային օլիմպիական խաղերի չեմպիոն, 2-րդ և 3-րդ մրցանակակիր՝ 80%,
- Հայաստանի Հանրապետության չեմպիոն՝ 50%:

բ. ստեղծագործական ակնառու հաջողություններ ունեցած ուսանող /արտասահմանյան կամ հանրապետական մենահամերգ, կամ ցուցահանդես՝ մինչև 50%,

գ.միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական օլիմպիադաների մրցանակիր ուսանող (մինչև 50%),

դ.միջազգային կամ հանրապետական ՈւԳԸ կոնֆերանսի դիպլոմակիր ուսանող՝ մինչև 50%,

14) ՀՀ կ և գ նախարարության կամ ՎՊՀ-ի աշխատակցի երեխա-ուսանողներ.

ա. ՎՊՀ-ում մրցույթով ընտրված առնվազն 5 տարի աշխատած դասախոսի երեխա՝ 80%,

բ. ՎՊՀ-ում որպես դասախոս և ոչ պակաս 10 տարի աշխատած աշխատողի երեխա-ուսանող՝ 80%,

գ. ՎՊՀ-ում, վարչական, վարչատնտեսական, ուսումնաօժանդակ աշխատակազմում 5 տարի աշխատած աշխատակցի երեխա-ուսանող՝ 80%:

15) ՎՊՀ-ի կողմից կազմակերպված դպրոցականների առարկայական օլիմպիադայի 1-ին մրցանակային տեղը գրաված և ՎՊՀ-ի վճարովի համակարգում սովորող ուսանող՝ 20%:

16) Բացառիկ դեպքերում ռեկտորատի որոշմամբ:

39. 38-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ ենթակետերում նշված սահմանային տարիքները լրանալու հաջորդ օրվանից դադարեցվում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումը:

40. Ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում: Դիմումին կցվում են կարգավիճակը հաստատող բոլոր փաստաթղթերը /համապատասխան փաստաթղթի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում/:

41. Դիմումները քննարկվում են դեկանատում, համապատասխան մակագրությամբ և/կամ տեղեկանքով ներկայացվում ուսումնամեթոդական վարչություն:

42. Ուսումնական վարչության կողմից վերանայվում են ցուցակները և փաստաթղթերը, վիճելի հարցերը քննարկվում են իրավախորհրդատուների հետ և ներկայացվում ռեկտորին՝ հրամանագրման:

43. Յուրաքանչյուր ֆակուլտետում ուսանողական նպաստ է տրամադրվում տվյալ ֆակուլտետի վճարովի չափաքանակի 10 տոկոսի շրջանակներում /յուրաքանչյուր համակարգի համար առանձին/ ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության հաշվառմամբ՝ մրցութային կարգով:
44. Մրցույթն անցկացվում է երկու փուլով: Առաջին փուլին մասնակցում են 86-100 միավոր ՄՈԳ ունեցող ուսանողները: Թափուր տեղ առաջանալու դեպքում անցկացվում է երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել 75-85 միավորից ցածր ՄՈԳ ունեցող ուսանողները:
45. Դեկանատի կողմից ներկայացված տեղեկանքները հիմք են հանդիսանում հրամանի նախագծի համար: Ուսման վճարի մասնակի փոխհատուցումը ամրագրվում է ռեկտորի հրամանով:

III.Կրթաթոշակի տրամադրում

46. ՎՊՀ-ում տրամադրվում են պետական և անվանական կրթաթոշակներ:

Պետական կրթաթոշակի տրամադրում

47. ՎՊՀ-ի պետական կրթաթոշակի թիվը և չափը յուրաքանչյուր տարի հաստատում է ՀՀ կառավարությունը տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ՎՊՀ-ին հատկացված միջոցների սահմաններում;
48. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է՝ ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար :
49. Ուսանողների ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝
    ա) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում.
    բ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.
    գ) մասնակցությունը ֆակուլտետի և ՎՊՀ-ի ուսանողական, հասարակական աշխատանքներին.
    Սույն Կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը ՎՊՀ-ի ներքին կարգապահական կանոնների պահպանումն է:
50. Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից:
51. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների:
52. ՎՊՀ-ի ներքին կարգապահական կանոնների խախտումը կարող է հիմք հանդիսանալ ուսանողին պետական կրթաթոշակ չտրամադրելու կամ կրթաթոշակից մինչև մեկ կիսամյակ զրկելու համար:
53. Կրթաթոշակի տրամադրման համար դեկանատից ներկայացվում են հավակնորդների ցուցակը ուսումնամեթոդական վարչություն: Ճշտված ցուցակները ներկայացվում՝ ռեկտորին՝ հրամանագրման:

Անվանական կրթաթոշակի տրամադրում

54. ՎՊՀ իրավասու է սեփական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու անվանական կրթաթոշակներ:
55. Անվանական կրթաթոշակը ֆինանսական խրախուսանք է, տրամադրվում է ՎՊՀ-ում առկա ուսուցմամբ առնվազն 4 կիսամյակ անընդմեջ ուսումնառած, գերազանց առաջադիմություն ունեցած, ՎՊՀ-ի, ֆակուլտետի ուսանողական, հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած և ուսումնառության ընթացքում ՎՊՀ-ի ներքին կարգապահական կանոնների խախտում չունեցած ուսանողին:

56. Անվանական կրթաթոշակ տրամադրելիս հաշվի է առնվում գիտական կոնֆերանսներին ունեցած զեկուցումները, խրախուսանքները կամ մասնակցությունը ուսանողական օլիմպիադաներին և նրանցում ունեցած հաջողությունները:
57. Անվանական կրթաթոշակը հատկացվում է ռեկտորի հրամանով՝ ըստ ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդների ներկայացրած առաջարկությունների:
58. ՎՊՀ-ից ազատվելու դեպքում անվանական կրթաթոշակի վճարումը դադարեցվում է:
59. Կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում ուսանողը զրկվում է անվանական կրթաթոշակից /կրթաթոշակից զրկելու համար հիմք կարող է հանդիսանալ ուսանողի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը/: